ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ մեծահասակներ,

Հոկտեմբերի 1-ին ողջ աշխարհը նշում է Տարեցների միջազգային օրը, որը լավագույն առիթն է՝ մեկ անգամ ևս բարձրաձայնելու ձեր ունեցած բացառիկ դերակատարությունը մեր հասարակության պատմության, զարգացման ու մշակույթի պահպանման գործում:

Դուք այն սերունդն եք, որի իմաստությունը, փորձը և նվիրվածությունը ճանապարհ են հարթել մեզ համար: Ձեր անցած ճանապարհը մեր բոլոր ձեռքբերումների հիմքում է, և այսօր մենք պարտական ենք ձեզ՝ խաղաղության, համերաշխության և բարեկեցության հիմքեր ստեղծելու համար:

Հատուկ ուզում եմ ընդգծել, որ մեր մարզում այսօր ապրում են 100 տարին բոլորած 7 տատիկներ ու պապիկներ, ովքեր մեր սրտերի մեջ առանձնահատուկ տեղ ունեն: Նրանք մշտապես մեր ուշադրության կենտրոնում են, և նրանց կենսափորձը անգնահատելի արժեք է մեզ համար:

Այս օրը՝ ձեր տոնի առթիվ, ուզում եմ ընդգծել, որ պետության և հասարակության կարևոր առաքելությունն է ապահովել արժանապատիվ ծերություն բոլորի համար՝ ստեղծելով պայմաններ առողջապահական ծառայությունների հասանելիության, սոցիալական պաշտպանության, հոգատար վերաբերմունքի և ակտիվ մասնակցության հնարավորությունների համար:

Շնորհակալ ենք ձեզ՝ ձեր տված կյանքի դասերի և սերմանած արժեքների համար: Ձեր ներկայությունը շարունակ հարստացնում է մեր կյանքը և ոգեշնչում է նոր սերունդներին:

Մաղթում եմ ձեզ առողջ ու խաղաղ տարիներ:

Թող ձեր շուրջը երբեք չպակասեն սերը, ուշադրությունն ու մարդկային ջերմությունը: